ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հետազոտական ուսումնասիրություն

Եվրոպական Բիզնես Ասոցիացիա

ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2016

Բովանդակություն

1. Ներածություն 3

2. Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի հետազոտության նպատակները և մեթոդաբանությունը . 4

3. ՄՓՄՁ զարգացման հիմնական խոչընդոտները 6

3.1 Մաքսային ծառայությունների հետ կապված խնդիրներ 8

3.2 Հարկային ոլորտի հետ կապված խնդիրներ 10

3.3 Իրավական դաշտի կարգավորման խնդիրներ 12

3.4 Օրենքի ուժը 13

3.5 Պետական գնումների հետ կապված խնդիրներ 14

3.6 Ֆինանսական միջոցների հասանելիություն 14

3.7 Եվրասիական Միություն 15

4. Եզրակացություն 17

1. Ներածություն

Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի կողմից իրականացված հետազոտության հիմնական նպատակն է բացահայտել Հայաստանում բիզնես գործունեություն իրականացնելու համար գոյություն ունեցող հիմնական խոչընդոտները, այդ խնդիրները վերհանել պետական-մասնավոր հարթակ և համապատասխան միասնական գործողություններ ձեռնարկել այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Հայտնի է, որ ՓՄՁ ոլորտը կարևոր դեր ունի երկրի տնտեսական աճը խթանելու, աշխատատեղեր ստեղծելու և երկրի ներդաշնակ զարգացումն ապահովելու համար: Ավելին, տարածաշրջանի, եվրոպական և այլ երկրներ արտահանում իրականացնող կազմակերպությունները հանդիսանում են տնտեսության զարգացման հիմնական շարժիչը: Հայաստանում ՓՄՁ-ների զարգացման համար առկա են մի շարք խոչընդոտներ, մասնավորապես հարկային ստուգումների գործընթացը, մաքսազերծման հետ կապված խնդիրները, դատական համակարգի թափանցիկությունը, ֆինանսների հասանելիությունը այն հիմնական արգելքներից են, որոնք անհրաժեշտ է հաղթահարել ավելի բարենպաստ բիզնես միջավայր ստեղծելու համար: Այս խոչընդոտներն ստիպում են որոշ ընկերություններին իրենց գործունեության մի մասը կամ ամբողջությամբ իրականացնել ստվերային հատվածում:

Հայաստանի բիզնես միջավայրում առկա վերը նշված թերություններից բացի նրա տնտեսական զարգացումն սահմանափակվում է աշխարհագրաքաղաքական և անվտանգության խնդիրներով, որոնց թվում են երկու հարևան երկրների հետ փակ սահմանները: Տարածաշրջանային փոփոխական աշխարհագրաքաղաքական իրավիճակը և Լեռնային Ղարաբաղի չլուծված կոնֆլիկտը բացասաբար են անդրադառնում տարածաշրջանային կայունության վրա: 2012 թվականին 7.2 տոկոս աճ ունենալուց հետո Հայաստանի տնտեսական աճը նվազեց մինչ 3.3 տոկոս 2013 թվականին և 3.5 տոկոս 2014 թվականին: 2015 թվականին ՀՆԱ աճը նվազեց մինչ 2.3 տոկոս՝ տարածաշրջանային առավել լայն տնտեսական անկման արդյունքում, որը ներազդում էր Հայաստանի վրա առևտրի, դրամական փոխանցումների և ներդրումների հոսքի միջոցով:

Ներկայում Հայաստանը գտնվում է Համաշխարհային Բանկի՝ 2016թ. բիզնեսի վարման ինդեքսի ընդհանուր թվով 189 երկրներից 35-րդ տեղում, որը զգալի բարելավում է՝ համեմատած 2009 թվականին 183 երկրներից 43-րդ տեղի հետ: Կառավարությունը բարելավել է հանրային ծառայությունների թափանցիկությունը՝ ներդնելով էլեկտրոնային համակարգեր, ներառյալ էլեկտրոնային կառավարում (e-government) և էլեկտրոնային ստորագրություն (e-signature) համակարգերը, և մեծ առաջընթաց է ապահովել էլեկտրոնային գնումների ոլորտում: 2014-2015թթ. Համաշխարհային մրցունակության հաշվետվության մեջ Հայաստանն ընդհանուր առմամբ բավականին դրական է գնահատված, իսկ կոռուպցիան և հարկային օրենսդրությունը նշված են որպես բիզնեսի վարման համար հիմնական խոչընդոտներ:

Մասնավոր հատվածի մրցունակության ամրապնդումը առանցքային նշանակություն ունի առավել լայնամասշտաբ տնտեսություն զարգացնելու, արտաքին գործոններից կախվածությունը նվազեցնելու և կայուն աճ ապահովելու համար:

Հարյուր քառասուն Միկրո, Փոքր և Միջին Ձեռնարկություններ, որոնք մասնակցել են Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի կողմից իրականացված հարցմանը արտացոլում են Հայաստանի բիզնես միջավայրում ձեռնարկությունների առջև ծառացած հիմնական խնդիրները: ՄՓՄՁ-ները մեծապես դժգոհություն են հայտնում մաքսային և հարկային համակարգի, ինչպես նաև օրենքների կիրառման և ֆինանսական հասանելիության խնդիրների վերաբերյալ: Ստորև ներկայացված արդյունքները ցույց են տալիս իրավական դաշտում, հարկային և մաքսային ծառայություններում և ֆինանսական համակարգում առկա խնդրահարույց ուղղությունները, որոնց հետ կապված կառավարությունը, մասնավոր ոլորտի և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, պետք է իրականացնի համապատասխան բարեփոխումներ: Հետազոտությունը մասնավորապես կարևոր է բիզնեսին օժանդակող կազմակերպությունների համար, քանի որ այն վերհանում է առավել լուրջ խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել Հայաստանում ՄՓՄՁ-ների զարգացման և վերջիններիս օժանդակելու նպատակով:

2. Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի հետազոտության նպատակները և մեթոդաբանությունը

Այս հետազոտական ուսումնասիրությունը դիտարկում է միկրո, փոքր և միջին չափի ձեռնարկությունների առջև Հայաստանում ծառացող առավել կարևոր խնդիրները: Հետազոտության նպատակներով օգտագործվող տվյալները հավաքագրվել են բիզնեսների սեփականատերերից/ղեկավարներից: Հարցազրույցներ են անցկացվել Եվրոպական բիզնես համայնքի ներկայացուցիչների, ինչպես նաև Հայաստանի տեղական ընկերությունների հետ: Հիմնական խնդիրները առնչվում են հետևյալ ուղղությունների հետ՝ մոնոպոլիա/արդար մրցակցություն, հարկային և մաքսային ծառայությունների հետ կապված խնդիրներ, իրավական և կանոնակարգման համակարգերում հանդիպող բարդություններ, պետական գնումների հետ կապված խնդիրներ, ֆինանսական միջոցներ ապահովելու հետ կապված հարցեր, ինչպես նաև անդամակցությունը Եվրասիական միությանը:

Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի կողմից անցկացված հետազոտությունը շարունակական գործընթաց է, և տվյալ հաշվետվությունը պարբերաբար թարմացվելու է՝

արտացոլելու բոլոր այն խնդիրները, որոնք արդիական են բիզնես միջավայրի բարելավման համար:

Հարցազրույցներին մասնակցել են 140 ընկերություն՝ դրանք ուսումնասիրելու համար, և քվոտաներ են սահմանվել ընկերությունների չափի հետ կապված (հետազոտվել են 10% «միկրո» չափի ընկերություններ, որոնք ունեն 1-9 աշխատակից, 30% «փոքր» չափի ընկերություններ, որոնք ունեն 10-49 աշխատակից, և 60% «միջին» չափի ընկերություններ, որոնք ունեն 50-250 աշխատակից): Ապահովված է եղել նաև ոլորտների ներկայացվածությունը, ընտրանքը պարունակում էր 40% ներմուծող ընկերություններ, 30% առևտրային ընկերություններ, 20% արտահանողներ և 20% արտադրողներ:

Ինչպես արդեն նշվել է, հետազոտության հիմնական նպատակն է ուսումնասիրել Հայաստանում բիզնեսի զարգացման համար առկա խոչընդոտները, որոնց ուղղությամբ կմշակվեն Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի հետագա ռազմավարական գործողությունները և քայլերը: Ելնելով ստացված տեղեկատվությունից և հետազոտության ամփոփված արդյունքներից՝ համապատասխան գործողություններ կառաջարկվեն Հայաստանում բիզնես մթնոլորտի, իրավական դաշտի, ներդրումային կլիմայի, ինչպես նաև հարկային ու մաքսային ծառայությունների բարելավման նպատակներով: Եվրոպական Բիզնես Ասոցիացիան արդեն համատեղ քննարկումներ է սկսել կառավարության, պետական եկամուտների կոմիտեի և այլ պետական մարմինների հետ նշյալ բարելավումների ուղղությամբ: Վերհանված խնդիրներից յուրաքանչյուրի համար որոշվել է ստեղծել համապատասխան փորձագետներից կազմված աշխատանքային խմբեր:

Այս հետազոտության համար կիրառվել է կիսակառուցվածքային հարցաշար 140 ընտրված բիզնեսներից բաղկացած ընտրանքի համար: Մասնակիցներից հիմնականում ակնկալվում էր բացահայտել այն առաջնային խնդիրները և բարդությունները, որոնց իրենք շարունակաբար հանդիպում են գործունեության ընթացքում, և որոնք խոչընդոտում են իրենց ընկերության աճին և զարգացմանը:

Հետազոտությունն անց է կացվել 2016 թվականի գարնան և ամռան ամիսներին: Հետազոտության համար կիրառվող հարցաշարը մշակվել է Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի կողմից և բաղկացած է 5 մասերից՝ 1) Տեղեկություններ ընկերության վերաբերյալ, 2) արտադրության/ծառայությունների մատուցման գործընթացի հետ կապված հիմնական խոչընդոտներ, 3) Տնտեսական և առևտրային ոլորտի խնդիրներ, 4) Իրավական ոլորտի խնդիրներ, 5) Ընկերությունների կողմից ունեցած յուրահատուկ խնդիրներ:

Չի իրականացվել հատուկ սեգմենտավորում ըստ ոլորտների, սակայն ընկերությունների մեծամասնությունը հանդիսանում էին տեղական փոքր և միջին արտադրողներ, առևտրային ընկերություններ, արտահանողներ և ներմուծողներ: Պատասխանողները հիմնականում հանդիսանում էին ընտրված ՓՄՁ-ների ղեկավարներ կամ հիմնադիրներ:

3. ՄՓՄՁ զարգացման հիմնական խոչընդոտները

Այս հետազոտության ընթացքում հավաքագրված տվյալների վերլուծությունը նպատակ է հետապնդում բացահայտել բիզնեսի ներկայացուցիչների կարծիքները ներդրումային կլիմայի և բիզնես միջավայրի վերաբերյալ, ինչպես նաև պարզել այն հիմնական խնդրահարույց ուղղությունները Հայաստանում իրենց բիզնեսի զարգացման համար, որոնք ներկայացված են ստորև՝ առանձին մասերով:

Պարզվում է, որ ՄՓՄՁ-ների ներկայացուցիչների վերաբերմունքը Հայաստանի տնտեսության բիզնես միջավայրի ընդհանուր իրավիճակի նկատմամբ բավականին քննադատական է, մասնավորապես այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բիզնեսի վարման կարողությունը, մաքսային և հարկային վճարներն ու ընթացակարգերը, մրցակցային միջավայրը և ֆինանսական միջոցների հասանելիությունը: Ստորև ներկայացված Գծապատկեր 1-ում ամփոփված են վերը ներկայացված խմբի ընդհանուր կարծիքները:

Գծապատկեր 1: Բիզնես միջավայրի գնահատում



ՄՓՄՁ ներկայացուցիչներն առավել դրական վերաբերմունք էին ցուցաբերում նոր բիզնեսի գրանցման հնարավորությանը: Մասնակիցների մեծ մասը նշեց, որ «նոր բիզնես սկսելը», որը վերաբերում է նոր ընկերության գրանցմանը, բավականին դյուրին է և պահանջում է ռոպեներ: Սակայն բիզնեսի գործունեության և ընդլայնման հետ կապված հարցերին պատասխանելիս մասնակիցների մեծ մասը նշեց մի շարք խնդիրների մասին, որոնք նրանք

ունեցել են Հայաստանում, ինչպիսիք են հարկային արտոնությունների բացակայությունը, սահմանափակ պետական աջակցությունը, մենաշնորհ, հավասար պայմանների և արդար մրցակցության բացակայությունը: Մարզերում գործող ընկերությունները չունեն հարկային արտոնություններ, մասնավորապես նրանք, ովքեր մարզերում զբաղված են արտադրությամբ: Բացի այդ, ընկերություններն առաջարկում էին նվազեցնել մաքսային վճարումների չափը հումքի ներկրման համար՝ դժգոհելով, որ երբեմն ավելի մատչելի է ներմուծել պատրաստի արտադրանք, քան հումք և արտադրությունն իրականացնել Հայաստանում: Արդյունքում տեղական արտադրանքը կորցնում է իր մրցունակությունը:

Այս հետազոտության շրջանակներում մասնակիցներին առաջարկվել է գնահատել մի շարք խնդիրների կարևորությունը բիզնեսի գործունեության և աճի համար: Այդ խնդիրներն ի վերջո դասակարգվել են հետևյալ խմբերի՝ արտահանող/ ներմուծող ընկերությունների համար ընդհանուր խոչընդոտներ, մաքսային ծառայությունների հետ աշխատելու բարդություններ, հարկային մարմինների հետ առաջացող դժվարություններ, ֆինանսական միջոցների հասանելիության խնդիրներ, իրավական և կանոնակարգման համակարգերում առկա բարդություններ, դատական համակարգի հանդեպ վստահության բացակայություն և խնդիրներ կապված Հայաստանի՝ Եվրասիական Միությանը անդամակցելու հետ:

Արտահանող/ներմուծող կազմակերպությունների համար հիմնական ընդհանուր խոչընդոտներից են ցածր գնողունակության և փոքր շուկայի հետ կապված խնդիրները, ինչպես նաև ստվերային տնտեսությունը, որը ձևավորվում է նաև հարկային և մաքսային մարմինների կողմից արհեստականորեն ստեղծվող խոչընդոտների արդյունքում: Որպես հիմնական խոչընդոտ նշվում են նաև մենաշնորհը, արդար մրցակցության բացակայությունը և անվստահությունը դատական համակարգի նկատմամբ:

Գծապատկեր 2: Արտահանող/ ներմուծող կազմակերպությունների համար հիմնական ընդհանուր խոչընդոտներ



Հետազոտության մասնակիցները հայտնել են նաև, որ ինչպես տեղական, այնպես էլ միջազգային տրանսպորտային կապերը գտնվում են ոչ պատշաճ մակարդակի վրա՝ ելնելով ծովային ելքերի բացակայությունից, աշխարհագրաքաղաքական լարվածությունից, ինչպես նաև տրանսպորտային ցանցի սահմանափակվածությունից: Այս հանգամանքը

բարձրացնում է Հայաստանում բիզնեսի վարման ծախսերը և սահմանափակում է տեղական ՓՄՁ-ների մուտքը դեպի համաշխարհային շուկա:

Ներկայում Հայաստանում արտոնություններ են գործում արտահանվող ապրանքների և ծառայությունների համար արտահանման տուրքերի բացակայության և ԱԱՀ փոխհատուցման առումով, սակայն ըստ սույն հետազոտության մասնակիցների՝ անհրաժեշտ է ապահովել ԱԱՀ վճարումների արագ և թափանցիկ փոխհատուցման գործընթացը: Այս խնդրի լուծման վերաբերյալ կառավարությունը ստանձնել է ԱԱՀ փոխհատուցման ուշացումների կրճատման պարտավորությունը:

3.1 Մաքսային ծառայությունների հետ կապված խնդիրներ

Մաքսային ծառայությունների հետ կապված խնդիրների քննարկման ժամանակ հետազոտության մասնակիցների երկու երրորդից ավելին նշեցին կոռուպցիան որպես հիմնական խոչընդոտ, ընկերությունների 71%-ը այս հարցը համարում էին բիզնեսի զարգացման առաջնային խոչընդոտներից: Թափանցիկության բացակայությունը և մաքսազերծման ընթացակարգերի ձգձգումն առավել բարձր են գնահատվել այս ուղղությունը որպես իրական խնդիր դիտարկող համապատասխանաբար 65% և 62% ընկերությունների կողմից: Հսկիչ գների և երկակի նշանակության ապրանքների հետ կապված խնդիրները նշվել են ընդհանուր մասնակիցների թվի մեկ երրորդի կողմից, սակայն դրանց դասակարգումը շատ ավելի բարձր է, եթե հաշվի առնվեն միայն ներմուծող կազմակերպությունները: Այս դեպքում ներմուծողների 90%-ը կարծում են, որ նշված խնդիրները հանդիսանում են իրենց գործունեության համար առաջնային խնդիրներից: Ստորև ներկայացված Գծապատկեր 3-ը ներկայացնում է հարցազրույց անցած ՄՓՄՁ-ների կողմից ներկայացված մաքսային ծառայությունների հետ կապված խնդիրները:

Գծապատկեր 3: Մաքսային ծառայություններին առընչվող խնդիրներ



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 3-ից, կոռուպցիան համարվում է Հայաստանում ՄՓՄՁ-ների բիզնեսի զարգացման համար լուրջ խնդիր: Վերջին չորս տարիների ընթացքում Հայաստանի կառավարությունը մի շարք բարեփոխումներ է իրականացրել, ներառյալ լիցենզավորման գործընթացի պարզեցումը, սոցիալական ծառայությունների բարեփոխումները, նոր քրեական օրենսգիրքը, հակակոռուպցիոն օրենքները և կանոնակարգերը, ինչպես նաև ստեղծել է հակակոռուպցիոն խորհուրդ, որի նպատակն է համակարգել կառավարության հակակոռուպցիոն գործողությունները և բարելավել կոռուպցիայի վերացմանն ուղղված քաղաքականությունը: Այնուամենայնիվ կոռուպցիան շարունակում է խնդիր մնալ օրենքների կիրառման գործընթացում, ինչպես նաև այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են դատական, հարկային և մաքսային համակարգերը:

Ինչպես նշվել է, ընկերությունների, մասնավորապես ներմուծողների կողմից բարձրաձայնվող կարևորագույն խնդիրներից մեկն է մաքսային մարմինների կողմից նախապես սահմանված հսկիչ գների կիրառման ընթացակարգը: Ապրանքների մաքսազերծումը հաճախ իրականացվում է հաշվի առնելով մաքսազերծման հսկիչ գները, որոնք զգալիորեն բարձր են վաճառքի իրական ինվոյսային գներից: Արդյունքում մաքսային վճարները գանձվում են հիմք ընդունելով այդ հսկիչ գները, մինչդեռ մաքսազերծումը պետք է հիմնված լինի հաշիվ-ապրանքագրերում նշված գների վրա: Մաքսային ծառայությունների ներկայացուցիչները պնդում են, որ որոշ ներկրողներ իրենց հաշիվ-ապրանքագրերում ցույց են տալիս նվազեցված արժեքներ, այդ իսկ պատճառով մաքսային ծառայություններն ստիպված են օգտագործել իրենց սեփական գնացուցակները: Դժբախտաբար սա հանգեցնում է կոռումպացված պրակտիկայի կիրառմանը և խտրականության դրսևորմանը՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով պետական պաշտոնյաների հետ փոխկապակցված բիզնեսների համար: Մի շարք դեպքերում բարձրաստիճան պաշտոնյաների հետ փոխկապակցված ընկերությունները ապրանքներ են ներկրում՝ խարդախորեն փոխելով ապրանքների դասակարգումը՝ մաքսային վճարները նվազեցնելու կամ դրանցից խուսափելու նպատակով: Նշված խնդիրը նաև խոչընդոտ է առաջացնում

կազմակերպությունների հետագա համագործակցության համար՝ մրցույթներին մասնակցելիս և բանակցված ֆիքսված գնով պայմանագրերի կնքման ժամանակ, որոնք կարող են հետագայում փոխվել հիմք ընդունելով մաքսային հսկիչ գնացուցակները: Ըստ հետազոտության մասնակիցների՝ այս խնդիրը հանգեցնում է անարդար մրցակցությանը, ֆինանսական պլանավորման, արտաքին գործընկերների հետ պայմանագրային հարաբերությունների խախտումների և առավել բարձր մաքսային վճարումների, որոնք արդյունքում դանդաղեցնում են բիզնեսի զարգացումը:

Երկակի նշանակության ապրանքների հետ կապված խնդիրը նույնքան կրիտիկական է: Բազմաթիվ դեպքերում մաքսային ծառայությունների աշխատակիցները հանկարծ որոշում են, որ ներմուծվող ապրանքը կարող է ունենալ երկակի օգտագործման նպատակ (օրինակ՝ իրենք որոշում են, որ ներմուծված յուղանյութերը կամ սարքավորումների պահեստամասերը կարող են օգտագործվել ռազմական նպատակներով): Ապրանքների երկակի նշանակությունը գնահատելու համար սկսվում է համապատասխան զննման գործընթացը (որի համար վճարում է ներմուծողը), որից հետո տրամադրվում է երկակի նշանակության մասին եզրակացությունը: Այս գործընթացը թափանցիկ չէ և գոյություն չունեն հստակ ընթացակարգեր/չափանիշներ ապրանքի երկակի օգտագործման թույլտվության կամ մերժման համար: Սա արհեստական խոչընդոտ է բիզնեսների համար, որը պահանջում է լրացուցիչ ժամանակ և ֆինանսական ծախսեր բիզնեսների համար:

Մի շարք դեպքերում մաքսային մարմինները ձգձգում են մաքսազերծումն առանց որևէ գրավոր բացատրության՝ համապատասխան լրացուցիչ գումարներ պահանջելով «հարցը լուծելու» համար: Արդյունքում ապրանքները կարող են վնասվել/փչանալ, և ընկերությունը ստիպված է նաև լրացուցիչ վճարել ապրանքների պահեստավորման համար: Որպես արդյունք դանդաղում է ընկերությունների շրջանառությունը և նրանք վնասներ են կրում: Այս իրավիճակի առավել հաճախակի լուծումն է կոռումպացված պաշտոնյաների միջոցով խնդրի վերացումը: Այնուամենայնիվ, անկախ այդ կոռումպացված պաշտոնյաների հետ հաճախակի հանդիպող խնդիրներից, ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա բիզնեսների ներկայացուցիչները պնդում են, որ հարկային ու մաքսային օրենսդրության և կանոնակարգերի լավ իմացությունը հնարավորություն է տալիս բիզնեսի սեփականատերերին մերժել կաշառք վճարելու անօրինական պահանջների մեծ մասը:

3.2 Հարկային ոլորտի հետ կապված խնդիրներ

Հարկային խնդիրների քննարկման արդյունքում Հայաստանում ՄՓՄՁ-ների զարգացման համար բացահայտվել են հետևյալ հիմնական խոչընդոտները: Ընկերությունների կողմից ունեցած բոլոր բարդությունների շարքում առավել բարձր են գնահատվել կոռուպցիան և պաշտոնական դիրքի չարաշահումը: Հարկերից խուսափելը խոշոր/լավ կապեր ունեցող բիզնեսների կողմից գնահատվել է որպես լուրջ խնդիր մասնակիցների 54%-ի կողմից: Ընկերությունների ներկայացուցիչների 40%-ից ավելին գտնում են, որ հարկային օրենսդրությունը հաճախ կարելի է մեկնաբանել երկակի ստանդարտներով, հարկերը

չափազանց բարձր են ՄՓՄՁ-ների համար, իսկ ընթացակարգերը չափազանց խիստ են և մեծ թվով տուգանքներ են ենթադրում փոքր տեխնիկական սխալների համար:

Գծապատկեր 4: Հարկային խնդիրների վերլուծություն



Հարկային ծառայությունների հետ կապված հիմնական դժգոհությունն է կոռուպցիան, պահանջվող կանխավճարները «պլանը կատարելու» և բյուջեն համալրելու համար: Հարկային օրենսդրությունը չափազանց հաճախ է փոփոխվում: Բիզնեսները չեն հասցնում հետևել շարունակական փոփոխություններին: Նոր հարկային օրենսգիրքը մշակվում է առանց բիզնեսի ներկայացուցիչների անհրաժեշտ մասնակցության և վերջիններիս շահերը հաշվի առնելու: Արդյունքում գործարարներից շատերն կարծում են, որ եկամտահարկի բարձրացումը, ինչպես նաև շահութաբաժինների հարկումը կհանգեցնի ստվերային տնտեսության ընդլայնմանը: Բացի այդ, օտարերկրյա ներդրողները խտրականության են ենթարկվում՝ 10% հարկ վճարելով իրենց շահութաբաժինների համար, համեմատած տեղական ներդրողներից գանձվող 5% հարկի հետ: Նոր հարկային օրենսգիրքը չափազանց բարդ է և լրացուցիչ աշխատանքային ծանրաբեռնվածություն է ստեղծում բիզնեսների համար:

Հարկային ստուգումները բավականին հաճախ են իրականացվում: Համակարգը կոռումպացված է, հարկային տեսուչները ակնկալում են գումարներ և դրանք չստանալու դեպքում հաճախ բարդացնում են հարկային ստուգման գործընթացը՝ բիզնեսների համար լրացուցիչ խնդիրներ ստեղծելով:

Յուրահատուկ խնդիրների շարքում նշվել է ԱԱՀ հարկը, որը գանձվում է սահմանին՝ ներմուծման ընթացքում, սակայն պետք է գանձվի ապրանքը վաճառելուց հետո: Այս հարցը ընկերությունների համար խնդիրներ է առաջացնում իրենց դրամական միջոցների սահմանափակման տեսանկյունից: Սակայն հարկային մարմինների կողմից բերվող հիմնական փաստարկն այն է, որ սահմանը հատելուց հետո բարդ է լինում վերահսկել և

գանձել ԱԱՀ: Հետազոտությունը ցույց է տվել նաև, որ ուսումնասիրված միկրո, փոքր և միջին չափի բիզնեսների քառորդը դժգոհ են փաստաթղթերի պահպանման առցանց համակարգերի բացակայությունից և առկա առցանց ծառայությունների անճշտություններից:

3.3 Իրավական դաշտի կարգավորման խնդիրներ

Մասնակիցների մեծամասնության կարծիքով Հայաստանում դատական համակարգն անկախ չէ: Տեղական և օտարերկրյա ներդրողները դատական համակարգը չեն համարում վստահելի, և կարծում են, որ տեղական դատարանների հետ չափազանց բարդ է աշխատել առանց համապատասխան կապեր ունենալու: Ընկերությունները չեն վստահում Հայաստանի դատական համակարգին և իրենց պաշտպանված չեն զգում:

Գծապատկեր 5: Իրավական դաշտի նկատմամբ վերաբերմունք



«Թրանսփարենսի ինթերնեյշնլ» կազմակերպության 2015 թվականի Կոռուպցիայի ընկալման ինդեքսով Հայաստանը 168 երկրներից դասվել է 95-րդ տեղում: Համաշխարհային Բանկի Համաշխարհային Կառավարման Ցուցանիշները վատթարացել են 2009 և 2011 թվականների միջև: 2011 թվականին Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի (ՎԶԵԲ) – Համաշխարհային Բանկի բիզնես միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտության մեջ մասնակցած կազմակերպությունների միայն մեկ երրորդն էր Հայաստանի դատարանները համարում արդար և անկողմնակալ:

Ստորև ներկայացված Գծապատկեր 6-ը ներկայացնում է բիզնեսի ընդլայնման համար առավել խնդրահարույց խոչընդոտները, որոնց հետ բախվում են Հայաստանի ՄՓՄՁ-ները

այս ոլորտում: Թափանցիկության բացակայությունը և օրենքների ոչ հավասար կիրարկումը նշվել են մոտ 50% հետազոտված ձեռնարկությունների կողմից:

Գծապատկեր 6: Իրավական դաշտի խոչընդոտները



3.4 Օրենքի ուժը

Հետազոտության մասնակիցների կարծիքով օրենքներն ու կանոնակարգերը կիրառվում են ոչ հավասար պայմաններում: Հետևաբար, խոշոր ընկերությունները, որոնք փոխկապակցված են պետական գործիչների հետ հաճախ խուսափում են հարկեր վճարելուց կամ վճարում են այն մասնակի, ապրանքներ են ներմուծում փոխելով մաքսային դասակարգումները, հետևաբար վճարելով ավելի ցածր մաքսային վճարներ: Բացի այդ, մաքսազերծման ընթացակարգերն անցնում են արտոնյալ պայմաններով, մինչդեռ մյուս ընկերությունների հանդեպ կիրառվում է անարդար մոտեցում: Մենաշնորհ ընկերությունները անհավասար պայմաններ են ստեղծում այլ ընկերությունների նկատմամբ, ինչը բացասաբար է անդրադառնում տեղական և օտարերկրյա կազմակերպությունների համար: Նույն իրավիճակն առկա է նաև պետական գնումների ոլորտում, որտեղ նախապատվությունը տրվում է բարձրաստիճան պաշտոնյաների հետ փոխկապակցված ընկերություններին:
Շուկայի բոլոր մասնակիցների համար անհրաժեշտ է ապահովել հավասար պայմաններ:

3.5 Պետական գնումների հետ կապված խնդիրներ

Հարցազրույցում մասնակցող կազմակերպությունների ղեկավարների կարծիքով պետական հաստատություններում առկա են բյուրոկրատական ընթացակարգերն, որոնք ուղեկցվում են մանր կոռուպցիայով: Պետական մրցույթներին մասնակցության ընթացակարգերը թափանցիկ չեն: Հայտարարությունները երբեմն տրվում են վերջնաժամկետից մի քանի օր առաջ, մինչդեռ պատրաստվելու և դիմելու համար անհրաժեշտ է առավել երկար ժամանակ: Բացի այդ տեխնիկական բնութագրերը հստակ չեն և երբեմն հարմարեցված են լինում նախապես ընտրված հաղթողներին:
Բիզնեսների ղեկավարների կարծիքով պետական գնումների մրցույթներում հիմնականում հաղթում են այն կազմակերպությունները, որոնք փոխկապակցված են բարձրաստիճան պաշտոնյաների հետ և որոնց համար համապատասխանեցվում են տենդերի պահանջներն ու տեխնիկական առաջադրանքները:

3.6 Ֆինանսական միջոցների հասանելիություն

Ֆինանսական միջոցների հասանելիությունը դեռևս կարևոր խնդիր է Հայաստանում ՄՓՄՁ-ների զարգացման և աճի համար: Ֆինանսական միջոցների հասանելիության խնդիրը ներառում է բարձր տոկոսադրույքներ, ՀՀ դրամով վարկերի սահմանափակում և գրավով չապահովված վարկային պրոդուկտների տեսականին:

Միկրո, փոքր և միջին չափի ձեռներեցների մոտ 68%-ը նշեց, որ բիզնեսների զարգացման համար իրենց անհրաժեշտ է առևտրի ֆինանսավորում և գրավի նկատմամբ ավելի ճկուն պահանջներ:

Վարկերի և փոխառությունների բարձր արժեքը և գրավի նկատմամբ խիստ պահանջները գնահատված են որպես առավել լուրջ խոչընդոտներ՝ ընկերությունների համապատասխանաբար 54% և 67%-ը դրանք դիտարկում են որպես կարևոր խնդիր իրենց բիզնեսի ընդլայնման համար: Գծապատկեր 7-ը ցույց է տալիս Հայաստանում ՄՓՄՁ-ների համար առավել կարևոր խնդիրները ֆինանսական ոլորտում:

Գծապատկեր 7: Ֆինանսական հասանելիության բարդություններ



Հայաստանում գործում են մեծ թվով բանկեր և վարկային կազմակերպություններ: Ֆինանսական միջոցներն ըստ էության հասանելի են, սակայն տոկոսադրույքները հաճախ չափազանց բարձր են և պակասում է ՀՀ դրամով ֆինանսավորում: Բացի այդ, ընկերություններին անհրաժեշտ են առևտրի ֆինանսավորման պրոդուկտների ավելի լայն տեսականի: Սկսնակ բիզնեսների համար սահմանափակ են ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը և պետական սուբսիդիաները:

3.7 Եվրասիական Միություն

2015 թվականի հունվարին Հայաստանն անդամակցեց Եվրասիական տնտեսական միությանը (ԵՏՄ), որի նպատակն է ընդլայնել առևտուրը և ներդրումները Ռուսաստանի, Ղազախստանի, Բելարուսի և Ղրղզստանի միջև: Հետազոտության մասնակից ՄՓՄՁ-ներն իրենց կարծիքն էին հայտնում այն խնդիրների վերաբերյալ, որոնք սկսեցին առաջ գալ Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցությունից հետո: Ընկերություններին հարց տրվեց, թե ինչ փոփոխություններ են տեղի ունեցել իրենց համար Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցելուց հետո, և հիմնական խնդրահարույց ուղղություններն ամփոփված են ստորև բերված Գծապատկերում:

Գծագիր 8: Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցելու հետ կապված խնդիրներ



Ակնհայտորեն առավել էժան է դարձել ներմուծում իրականացնել Ռուսաստանից և ԵՏՄ անդամ այլ երկրներից, քան Եվրոպայից և նույնիսկ Չինաստանից (եթե ԵՏՄ անդամ երկրում առկա է գործարան/ֆրենչայզ, ներկայացուցչություն): Որոշ եվրոպական ընկերությունների համար ԵՏՄ անդամակցությունը բացասական ազդեցություն է ունեցել: Շուկան հեղեղված է ԵՏՄ անդամ երկրներից ներմուծված էժանագին և ցածրորակ ապրանքներով, որը հարվածում է մրցակցությանը: Ավելացել է բյուրոկրատիան և Ռուսաստանում մաքսազերծում իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակը: Հետազոտության որոշ մասնակիցներ հայտնում են, որ իրենք սկսել են բարդություններ ունենալ լաբորատոր հետազոտությունների հետ, և հավաստագրերի հետ կապված պահանջներն ավելի են խստացվել: Որպես օրինակ, եվրոպական խոհանոցի վրա մասնագիտացող ռեստորանները ներկայում բարդությունների առաջ են կանգնում Ֆրանսիայից սնունդ ներկրելիս՝ բոլոր լրացուցիչ հավաստագրերի հետ կապված պահանջների հետևանքով, որոնց թվում են նաև անասնաբուժական հավաստագրերը, ISO 22000, HACCP հավաստագրերը: ԵՏՄ անդամակցությունից հետո մաքսային վճարներ են ավելացել մի շարք գյուղատնտեսական ապրանքների համար:

4. Եզրակացություն

Տվյալ հետազոտությունը ուսումնասիրական բնույթ է կրում: Չնայած, որ դիտարկումները հիմնված են սահմանափակ քանակութամբ միջին, փոքր և միկրո չափի ընկերությունների վրա, վերլուծությունը ցույց է տալիս, որ ՓՄՁ ոլորտը կանգնած է կոռուպցիայի, օրենքի ուժի, անարդար մրցակցության և ֆինանսական ռեսուրսների հասանելիության հետ կապված ճնշող խնդիրների առաջ:

Ելնելով այս հետազոտական ուսումնասիրության ընտրանքի փոքր չափից՝ այն չի կարող ներկայացուցչական համարվել ողջ ՄՓՄՁ ոլորտի համար, սակայն այս ուսումնասիրությունը բացահայտել է այն կարևոր խնդիրները, որոնք կարիք ունեն հետագա ուսումնասիրության և խնդիրների համապատասխան լուծմանը: Այս փաստաթուղթն արտացոլում է Հայաստանում ձեռնարկությունների զարգացման համար խնդրահարույց ուղղությունները և նպատակ է հետապնդում ներկայացնել Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի կողմից ձեռնարկվող հետագա գործողությունների ռազմավարական ուղղությունները՝ տնտեսության ՓՄՁ ոլորտի զարգացումը խթանելու և արտահանումն ընդլայնելու, ինչպես նաև առավել բազմազան դարձնելու նպատակով:

Հաշվետվությունում ներկայացված բիզնեսի զարգացման համար հիմնական խոչընդոտները ցույց են տալիս կառավարության, մասնավոր և ՀԿ ոլորտների համագործակցության անհրաժեշտությունը բիզնես և ներդրումային միջավայրի բարելավման նպատակով:

Այս առումով Եվրոպական Բիզնես Ասոցիացիան արդեն իսկ մեկնարկել է հետևյալ ռազմավարական ուղղություններով գործողությունների իրականացումը.

- Նախնական քննարկումների արդյունքում Հայաստանի 14 բիզնես ասոցիացիաներ ստորագրել են Փոխըմբռնման հուշագիր, որը հիմք է ստեղծում այս փաստաթղթում ներկայացված հիմնական խնդիրների լուծման նպատակով համատեղ գործողություններ իրականացնելու համար:

- Այս փաստաթղթում արտացոլված խնդիրները ներկայացվել են ՀՀ վարչապետին Եվրոպական Բիզնես Ասոցիացիայի կողմից 2016 թվականի հուլիսին կազմակերպված Պետական-Մասնավոր երկխոսության ընթացքում, որի արդյունքում ՀՀ Վարչապետը իր պատրաստակամությունն հայտնեց համագործակցել բիզնես ասոցիացիաների հետ՝ Հայաստանում ավելի բարենպաստ բիզնես մթնոլորտ և ներդրումային միջավայր ստեղծելու նպատակով:

- Եվրոպական Բիզնես Ասոցիացիան ներառվել է Կառավարության՝ ՓՄՁ զարգացման խորհրդի կազմում, որտեղ այն կարող է բարձրաձայնել հիմնական խնդիրները և ներկայացնել պաշտոնական առաջարկներ համապատասխան փոփոխությունների/ բարելավումների վերաբերյալ:

- Հարկային և մաքսային խնդիրների հետ կապված Եվրոպական Բիզնես Ասոցիացիան սկսել է համագործակցել Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի հետ, ինչպես նաև աշխատել օրենսդրական փոփոխությունների և հարկային և մաքսային ընթացակարգերի բարելավման ուղղությամբ:

- Եվրոպական Բիզնես Ասոցիացիան գտնվում է փորձագիտական աշխատանքային խմբերի ստեղծման փուլում, որոնք պետք է աշխատեն համապատասխան առաջարկներ ներկայացնելու և առավել կարևոր խնդիրների լուծումների ուղղությամբ:

- Հանդես գալով Եվրոպական Բիզնես Ընկերությունների Համաշխարհային Ցանցի անդամ Հայաստանում գործող Եվրոպական Բիզնես Ասոցիացիան նաև ուսումնասիրում է վերոգրյալ խոչընդոտների հնարավոր լուծումների միջազգային փորձը, որը նույնպես օգտագործելու է Հայաստանում բիզնես մթնոլորտը բարելավելու համար:

Եվրոպական Բիզնես Ասոցիացիա

info@eba.am

www.eba.am